ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՄԱՍԻԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«4» նոյեմբերի 2014 թվական գյուղ Ամասիա

ՈՐՈՇՈՒՄ 22-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԵՐԻՑ՝ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 08-010-0071-0005/ 6.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԹԵՐԹԻ ԿՐՊԱԿ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՊՐԵՍ ՍՏԵՆԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 5 ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 4-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի «ա» ենթակետի դրույթներով՝

Ամասիա համայնքի ավագանին որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքի սեփականությունը համարվող բնակավայրի հողերի հասարակական կառուցապատման հողերից, 2-րդ փողոց հողամաս 17/3 հասցեում գտնվող մանկական այգուց 6.0 քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ / կադաստրային ծածկագիր՝ 08-010-0071-0005/ թերթի կրպակ կառուցելու նպատակով, 5 տարի ժամկետով, վարձակալության իրավունքով և 9.000 /ինը հազար/ ՀՀ դրամ տարեկան վարձավճարով տրամադրել «Պրես Ստենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և կնքել վարձակալության պայմանագիր:

Ավագանու անդամներ՝

Դավթյան	Արտեմ	կողմ
Հովսեփյան	Հովսեփ	կողմ
Մանուկյան	Արթուր	կողմ
Մկրտումյան	Արթուր	կողմ
Քոչոյան	Ալեքսան	կողմ

Ամասիայի համայնքի ղեկավար՝ Ա. Ամիրյան

«4» նոյեմբերի 2014 թվական
գյուղ Ամասիա